ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԲՈՒՇԻ ԱՆՀԱՍԲ

BookMark

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ԲՈՒՇՆ ԱՆՀԱՄԲ

[1988–1992]
Հայ-ամերիկյան շփումների
գաղտնազերծված մանրամասներ

ԵՐԵՎԱՆ
2022

BookMark

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ս 259

Սարգսյան Սուրեն
Ս 259 Հայաստանն ու Բուշն անձամբ (1988-1992): Հայ-ամերիկյան շփումների գաղտնազերծված մանրամասներ / Ս. Սարգսյան.- Եր.: Newmag, 2022.- 296 էջ:

Այս գիրքը գաղտնազերծված բացառիկ փաստաթղթերի հիման վրա պատմում է հայ-ամերիկյան առաջին շփումների մասին: 1988-92 թվականները շատ կարևոր են հայ-ամերիկյան հարաբերությունների խորքային էությունը հասկանալու համար: Հենց այդ տարիներին է ձևավորվել ամերիկյան քաղաքականությունը մեր տարածաշրջանի նկատմամբ:

Գաղտնազերծված փաստաթղթերից պարզ է դառնում, թե ինչ հիմնարար շահեր ունի Միացյալ Նահանգները հայ-թուրքական հարաբերությունների ու ղարաբաղյան կարգավորման հարցերում: Գրքում ներկայացվում են մինչև այսօր չհրապարակված փաստեր, մանրամասներ «Գոբլի պլանի», 907-րդ բանաձևի, Ջորջ Բուշի որդու հայաստանյան այցի, Լևոն Տեր-Պետրոսյանի վարած բանակցությունների մասին: Այս ամենը շարադրված է աշխարհաքաղաքական պատմական ցնցումների համատեքստում: Առաջին անգամ հրապարակվում են նաև ամերիկացի դիվանագետների՝ Երևանից Վաշինգտոն ուղարկած գաղտնի զեկուցագրերն ու Վաշինգտոնից եկած գաղտնի հրահանգները:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-884-46-2
© 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Սուրեն Սարգսյան «Հայաստանն ու Բուշն անձամբ» © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Բովանդակություն

Նախաբան 9

Գլուխ 1 ԽՍՀՄ փլուզումն ու միաբևեռ աշխարհը 13

Գլուխ 2 Դրամատիկ 1988-ը. Գորբաչովի այցը Նյու Յորք ու Բուշի որդու այցը Գյումրի 31

Գլուխ 3 Սպիտակի երկրաշարժն ու ԼՂ խնդիրը ԱՄՆ-ԽՍՀՄ բանակցային օրակարգում 71

Գլուխ 4 Հայ-ադրբեջանական էսկալացիան ու Լևոն Տեր-Պետրոսյանի առաջին այցն ԱՄՆ 105

Գլուխ 5 Ջորջ Բուշը ճանաչեց Հայաստանի անկախությունը, ԽՍՀՄ փլուզումը 129

Գլուխ 6 Հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատումը 175

Գլուխ 7 Պետքարտուղար Ջեյմս Բեյքերի այցը Հայաստան և բռնության աճը Լեռնային Ղարաբաղում 201

Գլուխ 8 Հայաստանը՝ ԱՄՆ բարձրագույն ղեկավարության ուշադրության կենտրոնում 231

Գլուխ 9 «Գոբլի պլանը», Թուրքիայի նախագահի առաջարկը և Ջորջ Բուշի ժամկետի ավարտը 251

Վերջաբան 271

Ծանոթագրություններ 278

Լուսանկարների հեղինակներ 293

BookMark

Գիրքը նվիրում եմ որդուս՝ Արմենին

BookMark

Նախաբան

1988–1992 թվականները բացառիկ նշանակություն ունեն հայ–ամերիկյան հարաբերությունների համար: Պետքարտուղարության գաղտնազերծած փաստաթղթերը, որոնք առընչվում են այդ 4 տարիներին, լույս են սփռում ՀՀ–ԱՄՆ կապերի հաստատման, առաջին շփումների վրա՝ բացահայտելով մինչև այժմ անհայտ մանրամասներ: Այս տարիներին տեղի ունեցած միջազգային ու տարածաշրջանային բուռն զարգացումներն ուղղակիորեն ազդել են հայ–ամերիկյան հարաբերությունների վրա ու այսօր էլ ազդում են:

Այս գիրքն ուսումնասիրում է գաղտնազերծված փաստաթղթեր, որոնցում մանրամասն նկարագրված է, թե ինչ էին խոսում հայ և ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց առաջին հանդիպումներում, ինչպես էին պատկերացնում հետխորհրդային նոր աշխարհակարգը, ինչ էին ուզում միմյանցից ու ինչպես էին ձևավորում հետագա հարաբերությունները:

Հայ–ամերիկյան հարաբերությունների վրա վճռորոշ ազդեցություն էր գործել երեք իրադարձություն. 1988–ի երկրաշարժը, Հայաստանի անկախության հռչակումը և Ղարաբաղյան պատերազմը: Այդ տարիներին ԱՄՆ արտաքին քաղաքականությունը միտված էր ԽՍՀՄ անխուսափելի փլուզման հետևանքները մեղմելուն: Սպիտակ տունն ու Պետքարտուղարությունն ամեն ինչ անում էին, որ ցնցումները հնարա-

վորին չափ թեթև անցնեն, և նորաստեղծ պետություններն արագորեն կազմակերպեն իրենց ժողովրդավարական ինստիտուտների հիմնումն ու կայացումը: Հետխորհրդային երկրների քաղաքական ու տնտեսական վերափոխումներն անխուսափելիորեն պարտադրելու էին ծանր լուծումներ: Միացյալ Նահանգների նպատակն էր օգնել, որպեսզի այդ երկրները, նաև՝ Հայաստանը, դուրս գան կոմունիստական քաղաքական ավանդույթից և սոցիալիստական տնտեսության կառուցվածքից:

ԱՄՆ–ը շտապում էր՝ շատ լավ հասկանալով, որ կարող է անկաշկանդ գործել, քանի դեռ Ռուսաստանը կաթվածահար վիճակում էր: Վաշինգտոնի համար բացվել էր պատմական բացառիկ հնարավորություն: ԱՄՆ–ը քաղաքական ու տնտեսական ազդեցության բաց դաշտ էր ստանում այն տարածաշրջաններում, որոնցում երբեք չէր եղել: Միևնույն ժամանակ, հակառակ Սառը պատերազմի ոգով պնդումներին, ԱՄՆ–ը, մեղմ ասած, ոգևորված չէր ԽՍՀՄ փլուզման հետևանքներով և ծայրաստիճան անհանգստացած էր նախկին ԽՍՀՄ միջուկային սպառազինության վերահսկելիության խնդրով:

Այս գրքում հնարավոր է տեսնել, թե քաղաքական ինչ գիծ էր տանում Վաշինգտոնը Հայաստանի հետ հարաբերություններում, և հասկանալ, թե հայ–թուրքական հարաբերությունների կարգավորումն ԱՄՆ-ի համար ինչու է խիստ կարևոր նաև այսօր: Գրքում մանրամասն ներկայացված են նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ հայ և ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաների զրույցներն ու տեսակետները, որոնք հրապարակային չէին: Գաղտ-

նազերծված փաստաթղթերը մանրամասն ցույց են տալիս, թե ով, երբ, որտեղ ինչ էր խոսում Արցախի մասին, և հակամարտությունն ինչպես էր վերածվում լայնածավալ պատերազմի:

BookMark

1
ԽՍՀՄ փլուզումն ու միաբևեռ աշխարհը

☆

Հայ–ամերիկյան հարաբերությունների սկիզբը
և աշխարհաքաղաքական ֆոնը

1980–ականների վերջին և 1990–ականների սկզբին վերախմբագրվեց Եվրասիայի աշխարհաքաղաքական քարտեզը, որն ուրվագծվել էր Երկրորդ աշխարհամարտից հետո:

Սառը պատերազմն ավարտվում էր, Խորհրդային կայսրությունը՝ փլուզվում: Մասնատվում էին նաև ԽՍՀՄ արբանյակներ Չեխոսլովակիան ու Հարավսլավիան: ԽՍՀՄ մաս չկազմող, բայց դրա ազդեցության տակ գտնվող երկրները շուտով դառնալու էին ինքնիշխան պետություններ և շատ արագ միանալու էին Եվրաընտանիքին: Այս աշխարհաքաղաքական ցնցումները քանդում էին հին աշխարհակարգը և ձևավորում միաբևեռ աշխարհ՝ ամերիկյան բացառիկ գերիշխանությամբ:

ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ–ին ոչինչ չէր խանգարում ուղիղ հարաբերություններ հաստատել նախկին միության հանրապետությունների հետ: Ակնհայտ էր, որ ԽՍՀՄ իրավահաջորդ Ռուսաստանը տնտեսապես, քաղաքականապես և սոցիալապես քայքայված էր, իր ազգային և տարածաշրջանային շահերը սպասարկելու քիչ հնարավորություններ: Այդպես էր նույնիսկ այն երկրներում, որոնք ցարական կայսրության ժամանակներից համարվում էին ռուսական ազդեցության գոտիներ: ԽՍՀՄ–ը չկար, չկար երկբևեռ

աշխարհը, չկային ազդեցության գոտիներն ու աշխարհը բաժանելու վերաբերյալ գերտերությունների պայմանավորվածություններն :

Ռուսական կայսրության տարածքը 1905–ին 23 մլն ք/կմ էր, ԽՍՀՄ տարածքը՝ 22,4 մլն ք/կմ, իսկ Ռուսաստանի Դաշնությունը՝ 17 մլն ք/կմ: Գրեթե 5 մլն ք/կմ ձգված նախախորհրդային և խորհրդային տարածքները (պետությունները) արտաքին աշխարհի համար երկար ժամանակ անհասանելի էին թե՛ գործակցելու, թե՛ հարաբերություն հաստատելու համար: Այդ առումով ԽՍՀՄ փլուզումը ստեղծում էր ռազմավարական, քաղաքական և տնտեսական նոր հնարավորություններ, որոնցից ցանկանում էին օգտվել շատերը, նաև ԱՄՆ-ն՝ որպես գերտերություն, և նոր շուկաներ փնտրող ամերիկյան բիզնեսը՝ որպես տնտեսության զարգացման լոկոմոտիվ:

Ճակատագրի բերումով Ջորջ Հերբերտ Ուոքեր Բուշին էր վիճակված Ամերիկայի Միացյալ Նահանգներն առաջնորդել պատմական բարդ ժամանակահատվածում: 1981-1989 թթ. նախկին փոխնախագահ, 1970-ականներին Կենտրոնական հետախուզական գործակալության (ԿՀԳ) տնօրեն, ՄԱԿ-ում, հետո Չինաստանում ԱՄՆ ներկայացուցիչ, 1960-ականներին կոնգրեսական և Երկրորդ աշխարհամարտին մասնակցած ռազմական օդաչու Ջորջ Բուշն ԱՄՆ 41-րդ նախագահի պաշտոնում ընտրվեց 1988–ի նոյեմբերի 6-ին՝ պաշտոնը ստանձնելով 1989–ի հունվարի 20-ին:

Ջորջ Բուշը ծնվել էր 1924–ին, Մասաչուսեթս նահանգի Միլթոն քաղաքում: Նրա հայրը՝ Փրեսքոթ Բուշը, ԱՄՆ սենատոր էր Կոնեկտիկուտ նահանգից և հաջողակ գործարար: Հենց նրանից էլ Բուշը ժառանգել էր քաղաքական գործչի և գոր-

ծարարի ջիղը: Ջորջ Բուշն ԱՄՆ զինված ուժեր էր զորակոչվել 18 տարեկանում և այդ ժամանակ համարվում էր ԱՄՆ ռազմաօդային ուժերի ամենաերիտասարդ ծառայողներից մեկը: 19 տարին չբոլորած՝ նա արդեն իրականացնում էր մարտական թռիչքներ[1]: Ի դեպ, Բուշը պատերազմի կամ ռազմական գործողության անձամբ մասնակցած վերջին նախագահն էր ԱՄՆ պատմության մեջ:

Նախկին պետքարտուղար Հենրի Քիսինջերն իր «Աշխարհակարգ» գրքում բարձր է գնահատում Բուշի աշխատանքը.

> «Բուշը, կառավարության բոլոր մակարդակներում ունենալով մեծ փորձ, ակնառու հմտությամբ կարողացավ երկիրը հանել ճգնաժամերի ապշեցուցիչ շարքից: Դա դարձավ ամերիկյան արժեքների գործնական կիրառման և ահռելի հզորության սահմանների ստուգում»[2]:

Բուշի նախագահության շրջանի պատմաբան Ջեֆրի Էնգելը նրան նկարագրում է որպես ջենտլմենի.

> «Նա կրում էր ամերիկյան թե՛ ավանդական, թե՛ էլիտայի համար կարևոր արժեքները: «Ազնվականությունը պարտադրում է» եզրույթն ամբողջապես բնութագրում է Ջորջ Բուշին: Նա ապահովված ընտանիքի զավակ էր, որը ստացել էր բարձրակարգ կրթություն ու անցել բարձրորակ վերապատրաստում: Նա իր ամբողջ կյանքը ծառայեցրել էր հանրությանն ու առավելագույն չափով նվիրվել էր այդ գործին»[3]: